# ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
## 1959 — 1960 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ

*Ամենապատիւ Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրտէրեան*
*Ընտրեալ Պատրիարք Ս. Աթոռոյ,*
*Հոգեշնորհ Հայրեր և*
*Յարգելի Հանդիսականներ,*

*Դպրոցական ամավերջի հանդիսական այս առիթով, կը ներկայացնեմ Ձեզ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի տարուան մը տքնաջան աշխատանքին տեղեկագիրը։*

Վարժարանիս աշակերտութիւնը.— *Այս տարի մեր երկսեռ աշակերտութեան ընդհանուր թիւն էր 360, բաժնուած այսպէս. - 70 աշակերտներ Երկրորդական բաժնին մէջ, 210 աշակերտներ Նախակրթարանի բաժնին մէջ, իսկ 80 աշակերտներ Մանկապարտէզի բաժնին մէջ. Աշակերտութեան ընդհանուր թիւէն 170ը տղաներ են, իսկ 190ը՝ աղջիկներ։*

Ուսուցչական կազմ.— *Մեր ուսուցչական կազմին թիւն էր 30, որոնցմէ 23ը աշխարհականներ են, իսկ 7ը՝ եկեղեցականներ.*

*Յանուն տեսչութեան և աշակերտութեան, սրտագին շնորհակալութիւններ մեր ուսուցչական պատուական կազմին, որոնք մեր կողքին ջանք չխնայեցին մեր կրթական գործի բարւոք ընթացքին ի խնդիր. Անոնք եղան տեսչութեան լաւագոյն գործակիցները։*

*Տարւոյս ընթացքին, մեր ուսուցչական կազմին հետ ունեցած ենք 5 ժողովներ, ուր խորհրդակցած ենք Վարժարանի կրթական, կարգապահական և այլ խնդիրներու շուրջ։*

Կրթական եւ ուսումնական վիճակ.— *Ըստ Նախընթացի, մեր վարժարանը այս տարի ևս ընթացաւ երեք կրթական-ուսումնական բաժանումներով.— Մանկապարտէզ, Նախակրթարան և Երկրորդական շրջան։*

*Մեր Մանկապարտէզը կը բաղկանայ երեք դասարաններէ. Անձամբ հետեւեցանք Մանկապարտէզի աշխատանքներուն ու լայն չափով արդիականացուցինք Մանկապարտէզի ուսուցման եղանակը։ Այս տարի կրկնակիօրէն ճոխացուցինք մանկավարժական մեր խաղալիքներու ու մանուկներու դաստիարակութեան յատուկ գրականութեան հաւաքածոն — ուսուցչուհիներուն համար։ Մանուկներ այլեւս լալով դպրոց չեն գար, այլ ժպտելով, որովհետեւ դպրոցական միջավայրը յարմարեցուած է իրենց նախասիրութիւններուն, վառվռուն, գունաւոր, թեթև, ուրախ և աղուոր, զերծ բոլոր տեսակի կաշկանդումներէ։*

*Ուրախ ենք որ մեր նոր ուսուցչուհիներն ալ լայն չափով կը սատարեն այս պայմաններու ստեղծումին. Այս տարի մեզի կարելի եղաւ մեր Մանկապարտէզի երիտասարդ ուսուցչուհիներէն մին եռամսեայ Մանկավարժական դասընթացքի հետեւելու համար ղրկել Անգլիա, Գալուստ Կիւլպէնկեան Ֆոնտի բարերարութեամբ. Վստահ ենք որ օրիորդը պիտի վերադառնայ յաջորդ տարուան սկիզբը Եւրոպական աշխարհէն բերելով մեզի մանկավարժական նորութիւններ։*

*Մեր Նախակրթարանի և Երկրորդականի բաժինները շարունակեցին իրենց բարւոք ընթացքը. քաղաքիս օտար Կառավարական և այլ երկրորդական վարժարաններու կրթական ծրագրին համապատասխան մակարդակով ու ծրագրով։*

*Ինչպէս անցեալ տարի, այս տարի ևս, մեր երկրորդական վարժարանէն շրջանաւարտները մասնակցեցան* Ճի Սի Ի*ի Անգլիական քննութեանց։ Անցեալ տարուան մասնակցողներու արդիւնքը եղած է հետեւեալը.—*

*Անայիս Չէքիճեան — Հայերէն (Ատվանստ Լէվըլ), Անգլերէն, Ընդհ. Ազգաց Պատմութիւն և Ուսողութիւն (մաթէմաթիք)։*

*Արամ Գէլեան — Հայերէն (Ատվանստ Լէվըլ), Ուսողութիւն և Արաբերէն։*

*Աշխէն Ստեփանեան — Հայերէն (Ատվանստ Լէվըլ) և Ընդհ. Ազգաց Պատմ.։*

*Կատարինէ Փանոսեան — Հայերէն (Օրտինըրի) և Ընդհ. Ազգաց Պատմ.։*

*Գառնիկ Աւետիքեան — Հայերէն (Օրտինըրի)։*

*Անի Քէօրօղլանեան — Հայերէն (Օրտինըրի)։*

*Իսկ հետեւեալները թէեւ պաշտօնապէս մեր Վարժարանի աշակերտները չեն, սակայն տարի մը հետեւելէ վերջ մեր դասընթացքներուն յաջողեցան* Ճի Սի Ի*ի քննութեանց հետեւեալ ճիւղերուն մէջ.—*

*Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Գըպըրըլեան — Անգլ. լեզու, Անգլ. Գրականութիւն։*

*Օր. Աննա Գէորգեան — Անգլերէն լեզու և Անգլ. Գրականութիւն։*

*Իսկ մեր Վարժարանի Երկրորդական 4րդ դասարանի աշակերտներէն*

*Անդրանիկ Պասմաճեան յաջողեցաւ Անգլերէն լեզուի և Ընդհ. Ազգաց Պատմութեան մէջ,*

*Գեղունի Էքիզեան յաջողեցաւ Ընդհ. Ազգաց Պատմութեան մէջ,*

*Վարդան Չէքիճեան յաջողեցաւ Ֆրանսերէն լեզուի մէջ։*

*Ըստ Նախընթացի, մեր Վարժարանէն ներ*

digitised by A.R.A.R.@

ուսուցանեցան Հայերէն, Արաբերէն և Անգլերէն լեզուներ, զանազան գիտական ճիւղեր, կրօնք և շարք մը հայագիտական դասեր։ Հետեւեալ աշակերտ պարագան կ'արժէ յիշատակել. — Անցեալ տարի մեր աշակերտներէն ութը մասնակցեցան Ճի Սի Իի Անգլերէն լեզուի և գրականութեան քննութեանց։ Այս ութէն չորսը յաջողած են։ Մինչ քաղաքիս այլ դպրոցներէն այս մարզին մէջ բարձրագոյն արդիւնք ունեցողը մասնակցած է 14 աշակերտներով՝ որոնցմէ երկուքը միայն յաջողած են։

Մեր Ամավերջի Քննութիւնները տեղի ունեցան 1960 Յունիս 20-25։ Այս տարի մեր 360 աշակերտներէն 10ը կը կրկնեն իրենց դասարանները։

Ցաւով դիտել կու տանք որ չենք կրնար դըպրոցին և ծնողներուն միջև ստեղծել համագործակցութեան գետին մը որովհետև մեր ծնողներուն մեծագոյն տոկոսը չի հետաքրքրուիր կամ հետաքրքրուելու ի վիճակի չէ իր զաւակներուն դաստիարակութեան գործով։ Այլապէս իրենց դասարանները կրկնող աշակերտներուն թիւը կարելի էր կիսով նուազեցնել։

Մօտէն հետեւեցանք ու անձամբ հսկեցինք բոլոր դասաւանդութեանց, և կրնանք վստահօրէն յայտնել թէ անոնք կատարուեցան անթերի կանոնաւորութեամբ։

Ուսուցիչներէ ընտրուած յանձնախումբի մը միջոցաւ պարբերաբար քննութեան առարկայ եղան բոլոր պարտականութեանց տետրակները։ Իսկ անոնց դիտողութիւնները առարկայ եղան ուսուցչական ժողովներու խորհրդակցութեանց։

**Բարոյական դաստիարակութիւն.** — Մեր աշակերտները մեր ազգային խնկարոյր ու կրօնաշունչ շրջապատին կնիքն է որ կը կրեն իրենց հոգիներուն մէջ, այդու իսկ մեր բարոյական դաստիարակութիւնը կը ստանայ իր ձեւը։ Գոհունակութեամբ կը նշեմ թէ այս մարզին մէջ չունինք զժտութիւններ և թէ մեր աշակերտներուն վարք ու բարքին միջինը լաւագոյն է բաղդատած քաղաքիս այլ վարժարաններուն։

Ըստ նախընթացի, մեր ամենօրեայ կրօնքի և ազգային պատմութեան ուսուցումին քով ի վեր կատարած ենք մեր կրօնական պարտաւորութիւնները, ամէն Կիրակի մեր աշակերտները առաջնորդելով Ս. Եկեղեցի ու տարին քանիցս մասնակից դարձնելով Ս. Հաղորդութեան փրկաբար Խորհուրդին։ Այս առթիւ չենք մոռցած հրաւիրել նաև քաղաքիս այլև այլ օտար վարժարաններու հայ ուսանողները, որոնք մաս և բաժին ունեցած են նոյն Ս. Խորհուրդէն։

**Հայ Երաժշտութեան դասընթացք.** — Այս երկրորդ տարին է որ հայեցի տոհմիկ երգին ոգին ու գիտութիւնը սկսած ենք ջամբել մեր աշակերտներուն, որպէս երաժշտութեան ուսուցիչ ունենալով Պր. Սահակ Գալայճեանը։ Այս ճիւղին տուած ենք կարևորութիւն, որովհետև Հայ Երգը լաւ մթերանոցն է հայեցի ազգեկանութեան։

30 Ապրիլ 1960ի երեկոյեան ունեցանք մեր տարեկան Երգահանդէսը, ուր մեր աշակերտները ապրեցուցին մեզ բոլորիս հայ կրօնական ու աշխարհիկ երաժշտութեան քաղցր վայելքը։ Մեր այս երկրորդ տարեկան երգահանդէսը յայտնապէս առաւել յաջողութիւն մըն էր բաղդատած առաջին երգահանդէսին։

**Մարզական կեանք.** — Տարուայս ընթացքին ամէն օր կանոնաւորաբար թէ՛ տղոց և թէ՛ աղջիկներու համար ունեցանք մարմնակրթական կրթանքի պահեր, Ֆութպոլի, պասքէթպոլի, փինկփոնկի, վոլիպոլի 23 միջդպրոցական մրցումներ, ինչպէս նաև մրցումներ արտաքին կազմակերպութիւններու և օտար դպրոցներու խումբերուն հետ։

12 Յունիս 1960, Կիրակի կէսօրէ վերջ, ունեցանք մեր դպրոցի տարեկան Դաշտահանդէսը, ուր մեր աշակերտները (տղաք) բաժնուած Արարատ, Մասիս, (աղջիկներ) Սեւան և Երեւան՝ չորս խումբերու, ցուցադրեցին իրենց մարզական տարուան մը աշխատանքին հանդէսը, ի ներկայութեան Ս. Յակոբեանց Միաբանութեան և ժողովուրդի հոծ բազմութեան։

**Սկաուտական շարժում.** — Առաջնորդութեամբ Սկաուտապետ Պր. Գօզոս Աբրահամեանի և Արենուշապետ Օր. Ազնիւ Եաղուպեանի, Վարժարանիս 150ի մօտ Սկաուտները, Արենուշները, Արծուիկներն ու Գայլիկները կը շարունակեն իրենց աշխատանքները ըստ նախընթացի, ամէն շաբաթ ունենալով իրենց դասախօսութիւնները, և երբեմն ալ իրենց արշաւներն ու պտոյտները։

Մեր Արիներն ու Արենուշները քանիցս բերին իրենց մասնակցութիւնը քաղաքիս միջազգային սկաուտական ձեռնարկներուն մէջ, ու արժանացան պատուոյ յիշատակութեան։

**Ձեռագործային աշխատանք եւ տարեկան Պազար.** — Մեր կրթական գործին առընթեր, աղջիկներուն համար այս տարի ևս շարունակեցինք մեր ձեռագործային աշխատանքներու ամենօրեայ պահերը։

Մեր աշակերտուհիներու ձեռագործներով ունեցանք տարեկան Պազարի և Վիճակահանութեան ձեռնարկ մը՝ 19 Յունիս 1960 Կիրակի ամբողջ օրը։ Նոյն պազարի ձեռնարկէն Վարժարանս ունեցաւ մօտ 160 Տինարի զուտ շահ մը։

**Տարրալուծարան-Գրադարան.** — Մեր գիտական դասերու յատուկ տարրալուծարանը, ինչպէս նաև դպրոցական գրադարանը, ըստ մեր նախընթաց ծրագրին, ճոխացաւ նորանոր յաւելումներով, Գերմանիայէն բերուած նորանոր գործիքներով։

**Հանդիսական այլ ձեռնարկներ.** — Շաբաթ, 9 Յունուար 1960ին ունեցանք Մանկապարտէզի և Նախակրթարանի Ամանորի Հանդէսը, որուն հասոյթը յատկացուեցաւ Մանկապարտէզի մանկավարժական խաղալիքներու ճոխացման։

Կիրակի, 3 Յուլիս 1960ին տեղի ունեցաւ Մանկապարտէզի և Նախակրթարանի Ամավերջի Հանդէսը, ուր 26 փոքրիկներ ստացան իրենց ուսարտական վկայականները Մանկապարտէզէն,

digitised by A.R.A.R.@

*յաջորդ տարի անցնելու համար Նախակրթարանի բաժինը։*

Տնտեսական. — *Մեր տեղեկագիրը ամբողջացնելու համար կու տանք նաեւ մեր Վարժարանի տարեկան տնտեսական ելեւմտացոյցը — 1959 Մայիս 1 - 1960 Ապրիլ 30։*

| | Մուտք | Ելք |
|---|---|---|
| Աշակերտաց թոշակներէ | 784.950 | |
| Վաճառելի գրենական | 310.250 | 279.365 |
| Ձեռագործներէ եւ պազարէն | 444.550 | 137.295 |
| Հանդէս, թոմպոլա եւ ցուցահանդէս | 86.615 | 84.155 |
| ՈՒՆՐՈՒԱյէն | 336.065 | |
| Նուիրատուութիւններէ | 1476.079 | |
| Բացառիկ Ապահովագրութեան Ընկ.էն զանձեալ տարրալուծարանի կորուած գործիքներու փոխարէն | 18.750 | |
| Գրենական պիտոյքներու | | 101.040 |
| Մանր ծախքերու եւ դրոշմաթուղթի | | 66.670 |
| Կահ-կարասեաց եւ այլ նորոգութեանց | | 194.790 |
| Բացառիկ Սկաուտներու զգեստ եւ կաշի | | 13.400 |
| Տարրալուծարանի գործիքներու | | 84.647 |
| Ամսականք | | 4917.500 |
| | 3457.259 | 5908.862 |
| Տախուց առաւելութիւն՝ վճարեալ Ս. Աթոռէն | 2451.603 | |
| | 5908.862 | |

*Ստորեւ կու տանք նաեւ անունները մեր դպրոցի նուիրատուներուն, անոնց նուիրատուութեանց քանակով մէկտեղ, սկսելով 1959 Մայիս 1էն 1960 Մայիս 1.*

| ՄԱՅԻՍ | ՏԻՆԱ |
|---|---|
| Պր. Սարգիս Շնորհաւորեանէն (Եգիպտոս) | 3.300 |
| Պր. Աւետիս Օհանեանէն » | 3.300 |
| Տկ. Աննա Տօլէէն » | 2.000 |
| Պր. Ե. Պասմաճեանէն » | 3.300 |
| Պր. Զ. Դերձակեանէն » | 3.300 |
| Պր. Ա. Սրէնեանէն » | 13.400 |
| Պր. Դ. Տ. Ղազարեանէն » | 6.700 |
| Պր. Վարդան Մուշեղեանէն » | 3.300 |
| Ոմն » | 16.700 |
| Տկ. Հնազանդ Ալեքսանեանէն » | 13.450 |
| Տկ. Պարմանեանէն » | 3.300 |
| Պր. Ա. Այվազեանէն (Սաքրամէնթօ) | 8.800 |
| Պր. Նազար Հիմայեանէն (Նիւ-Եորք) | 8.700 |
| Պր. Արա Եարտըմեանէն » | 8.800 |
| Տկ. Ազնիւ Հանրըեանէն (Պոսթըն) | 8.800 |
| A. C. Y. O. C.ի Կեդր. Վարչ.էն (Լոս-Անճելոս) | 8.800 |
| **ՅՈՒՆԻՍ** | |
| Պր. Պետրոս Զօպանեանէն (Ռէյսին) | 17.500 |
| Պր. Նշան Թաշճեանէն (Եդեմ) | 8.850 |
| **ՅՈՒԼԻՍ** | |
| Ասպետք Վարդանանցի 1958ի յանձնաժ. (Ն.-Ե.) | 177.500 |
| Տկ. Տօլօրէս Լիպմանէն » | 106.500 |
| **ՕԳՈՍՏՈՍ** | |
| Կալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութենէն 1958ի համար (Նիւ-Եորք) | 357.000 |
| Տկ. Մ. Միքայէլեանէն (Պոսթըն) | 8.700 |
| Փասատենայի Տիկն. Միութենէն (Փասատենա) | 8.800 |
| Պր. Սահակ Վարդանեանէն (Ռէյսին) | 8.850 |
| Պր. Արմէն Աւետեանէն (Ֆրէզնօ) | 8.850 |
| Պր. Ստեփան Փիլիպպոսեանէն (Ֆիլատելֆիա) | 35.650 |
| Օր. Արմինէ Ամէրքեանէն Եդեմ | 35.650 |
| **ՆՈՅԵՄԲԵՐ** | |
| Ֆիլատելֆիոյ Հայց. Եկեղեց. Տիկնանց Միութենէն (Ֆիլատելֆիա) | 8.850 |
| Տկ. Կիւլ Այվազեանէ (Նիւ-Եորք) | 8.912 |
| Ս. Խաչ Եկեղեց. Կիրակնօրեայէն (Նիւ-Եորք) | 8.912 |
| Պր. Մկրտիչ Սամարեանէ (Տիթրոյթ) | 8.700 |
| **ԴԵԿՏԵՄԲԵՐ** | |
| Տկ. Լիլիա Գասպարեանէն (Սաքրամէնթօ) | 17.900 |
| Պր. Յովհաննէս Պէրպէրեանէն (Ֆիլատելֆիա) | 35.700 |
| Վէլէզլիի Հայ Եկեղեց. Տիկնայք (Վէլէզլի) | 9.000 |
| **ՅՈՒՆՈՒԱՐ** | |
| Պր. Մարթին Արզարեանէն (Տիթրոյթ) | 8.900 |
| Պր. Ճորճ Պէյլէրեանէն » | 17.800 |
| Պր. Ա. Օտապաշեանէն (Ֆիլատելֆիա) | 8.900 |
| Տկ. Լուսին Կիւրիւնլեանէն » | 26.700 |
| Պր. Պ. Ասլանեանէն (Շիքակօ) | 8.900 |
| Տկ. Լիլիա Գասպարեանէն (Սաքրամէնթօ) | 8.900 |
| Պր. Սիմոն Շմաւոնեանէն (Նիւ-Եորք) | 8.900 |
| Պր. Ստեփան Բանիկեանէն (Աւստրալիա) | 4.900 |
| Տկ. Թիմուրէն (Լոս-Անճելոս) | 8.750 |
| Տկ. Ա. Հանրըեանէն (Պոսթըն) | 8.750 |
| **ՓԵՏՐՈՒԱՐ** | |
| Հէրրի Պըրս եւ Ընկ.էն (ԱՄՆ) | 133.280 |
| Պր. Ա. Բարեջանեանէն (Ռիսլի) | 8.800 |
| **ՄԱՐՏ** | |
| Պր. Ճիվան Գարակէօզեանէն (Ֆրէզնօ) | 9.000 |
| Պր. Գրիգոր Պարոնեանէն (Լոս-Անճելոս) | 9.000 |
| Պր. Գառնիկ Աբրահամեանէն (Փասատենա) | 9.000 |
| Պր. Ճան Յովհաննէսեանէն (Ֆրէզնօ) | 9.000 |
| Պր. Սիմոն Ճինկէօզեանէն (Տիթրոյթ) | 9.000 |
| Պր. Կարօ Գազազեանէն (Շիքակօ) | 9.000 |
| Պր. Վարդան Խաչիկեանէն (Շիքակօ) | 9.000 |
| Տկ. Թ. Դանիէլեանէն (Պոսթըն) | 8.500 |
| Պր. Հ. Քոլինզըն (Օքլէնտ) | 9.000 |
| Պր. Կարապետ Աւճեանէն (Ռիչմոնտ) | 9.000 |
| Լոնկ-Այլընտի Կիրկ. Վարժ.էն (Լոնկ-Այլընտ) | 17.500 |
| Պր. Երուանդ Յակոբեանէն (Նիւ-Եորք) | 9.000 |
| Պր. Սեդրակ Սուլթանեանէն (Ֆիլատելֆիա) | 8.700 |
| Պր. Գրիգոր Կարապետեանէն » | 8.900 |
| Տկ. Ովսաննա Տէր-Յակոբեանէն (Պոսթըն) | 8.900 |
| Տկ. Մ. Միքայէլեանէն » | 8.900 |
| Պր. Թադէոս Թէմուզեանէն (Եդեմ) | 8.900 |
| Հոգշ. Տ. Զաւէն Վրդ.ի միջոցաւ հանգանակուած Աղեքսանդրիայէն | 14.500 |
| Պր. Յ. Գաբրիէլեանէն (Աղեքսանդրիա) | 1.500 |
| Պր. Երուանդ Փաստրմաճեանէն » | 3.675 |

digitised by A.R.A.R.@

ԱՊՐԻԼ.

| | |
|---|---|
| Պր. Սերոբ Թորոսեանէն (Նիկոսիա | 1.950 |
| Պր. Նազար Հիմայեանէն Նիւ-Եորք) | 8.500 |
| Կյ. Մի. Վայ. Օ. Էյ. (Ֆրէզնօ) | 8.500 |
| Տկ. Մ. Օտապաշեանէն (Քլիվլէնտ | 8.850 |
| Օր. Զ. Ասլանեանէն (Էվրնսթըն) | 8.800 |
| Պր. Նշան Թաշճեանէն (Եդեմ | 8.850 |
| Պր. Զարեհ Աբրահամեանէն (Փասատենա | 9.000 |
| Ընդհ. գումար | 1471.479 |

Այս առթիւ, յանուն Տեսչութեան և ուսանողութեան, կը յայտնենք մեր զգածուած շնորհակալութիւնները մեր բոլոր ազնիւ նուիրատուներուն. Թող Տէրը օրհնէ ու իր բազմապատիկ շնորհներով առատացնէ զիրենք բոլորը։

Մեր զգածուած ու սրտագին շնորհակալութիւնները Օր. Լիլիա Գարակէօզեանին և իրմով՝ Գարակէօզեան Տունին, որուն տարեկան 1000 տոլարի ազնուական նուիրաբերութիւնը մեզ կարելի կը դարձնէ ստանձնել տարեկան հոգը ամբողջ դասարանի մը։

Շնորհակալութիւններ Ամերիկաբնակ Տէր և Տիկին Մովսէս Մովսէսեանի և «Հայ Ուսանողներու Ամերիկահայ Բարեկամներ» Ընկերակցութեան՝ որ ամէն տարի նիւթական կարեւոր օժանդակութիւն մը կը բերէ մեր գործին։

Երախտագիտական սրտագին պարտք ունինք մեր Վարժարանը հովանաւորող Հաստատութեան՝ Ս. Յակոբեանց Միաբանութեան և Ս. Աթոռոյս Ամենապատիւ Պետին, որ հակառակ մեր օրերու շատ աննպաստ պայմաններուն, թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական ոչ մէկ օժանդակութիւն կը խնայեն Ս. Թարգմանչաց այս տունը շէն ու գործօն պահելու։

Այժմ, Ո՛ Հայր, Ձեզ կը ներկայացնենք մեր երկրորդական Վարժարանէն շրջանաւարտ 7 տղաները (1 մանչ և 6 աղջիկ), ինչպէս նաև մեր Վարժարանի բոլոր դասարաններէն վարքով ու աշխատանքով ամենէն յառաջադէմ աշակերտները, որպէսզի Ձեր օրհնութեանց հետ իրենց բաշխէք նաև իրենց ուսումնական վկայականներն ու մրցանակները։

Մաղթելով ի համբոյր Ձեր Ս. Աջոյն,

Խոնարհաբար

ԿԻՒՐԵՂ ՎՐԴ. ԳԱԲԻԿԵԱՆ

Տեսուչ Ս. Թարգմանչաց Վարժարանի

# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Ուր. 1 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս.։

● Շբ. 2 Յուլիս. — Ս. Գր. Լուսաւորչի գիւտ նշխարաց տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատրան մէջ, ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։

● Կիր. 3 Յուլիս. — Մայր Տաճարին մէջ պատարագեց Հոգշ. Տ. Յուսիկ Արղ. Պաղտասեան, քարոզեց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, բնաբան ունենալով «Եկայք առ իս, ամենայն վաստակեալք և բեռնաւորք»։

● Դշ. 6 Յուլիս. — Թարգմանչաց նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեան։

● Եշ. 7 Յուլիս. — Ս. Թարգմանչաց վարդապետացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ Տօն ազգային։ Ըստ սովորութեան, Մայր Տաճարին մէջ պատարագեց և քարոզեց Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչը՝ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեան։ Ս. Պատարագէն ետք, Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բաբիլուսեանի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Հայ Մշակոյթի վաստակաւորներու հոգիներուն համար։

● Շբ. 9 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը, որ ժամերգութեան ընթացքին Ուրար կրելու արտօնութիւն տուաւ Ս. Յարութեան Տաճարի Լուսարար Տրց. Մկրտիչ Խաչատուրեանի և ժառանգաւոր սան Արամ Գազանճեանի։

● Կիր. 10 Յուլիս. — Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Գերշ. Տ. Ասողիկ Եպս. Ղազարեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանի ձորը, ուր Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ պատարագեց Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, քարոզեց Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան, բնաբան ունենալով «Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք»։

● Ուր. 15 Յուլիս. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս.։

● Շբ. 16 Յուլիս. — Երկոտասան առաք. Քրիստոսի: Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Ս. Պօղոսի վերնամատրան մէջ մատոյց Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան։

● Կիր. 17 Յուլիս. — Ս. Պատարագը՝ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ մատոյց Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբիկեան։

digitised by A.R.A.R.@